

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 արեւիկան 12 փր.
 վեցամսեայ 6 "

Արտասահմանի
 համար արեւիկան 15 "
 վեցամսեայ 8 "

Աւերիկայի համար
 արեւիկան 3 սր.
 վեցամսեայ 1.50 "

Մանուգրան սոյր սուս
 ջին երեսին համար 40 ս.
 իսկ վերջին երեսին հա-
 մար 20 սանթիմ. երե-
 ֆեն աւելի անգամներու
 համար 20 0/0 զեղէ կը յ-
 շայ :

Վառնայի համար
 40 սանթիմ

ՃԱՆՈՐԴԱՆ

ՄԱՐԿԻ ԱԶԳԱՐԻՆ. ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին յիսուս ցրկի
 խմբագրութեան հաս-
 ցեի

Редакция на вѣтъникѣ
 „Шаржувъ“
 Варна

Redacti n du j-urnal
 „Char oum“
 (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
 40 սանթիմ

Արտասահմանի համար
 40 սանթիմ

Գրութիւնի և ս յն
 ցրտի

«ՇԱՐՇՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ»

ԵՂՐԱՑՐԱԿԱՆ ՑՈՑՑԵՐԸ ԹՅՈՒՍ ԻՄ

— () 0 0 —

Ա.

(Թիֆլիզի մեր ուղիստակցեն)

Հրաշագեղ, հազուագիւտ, գուցէ
 եւ անգիւտ օրեր մարդկային պատ-
 մութեան մէջ — ահա ինչպէս կարե-
 լի է անուանել Թիֆլիսի անցկացրած
 վերջին երկու օրերը : Ես ինձ երջա-
 նիկ եմ զգում, որ բազմ ունեցայ
 տեսնել, մասնակցել եւ ապրել այդ
 օրերը՝ իրանց բոլոր գրաւորութեան,
 ամբողջ վեճութեան ու փառահեղու-
 թիանքը : Վե՛հ էին այդ օրերը, որոնց
 նման չարաքոյղ անցքերի սեւ ոճի-
 րերի ու ազգայնական մշտական վկայ
 երկիրքը գուցէ էլ չի տեսնի իր կա-
 մարների տակ, երկար դարերի ըն-
 թացքում :

Թէ՛ ինչ հսկայ, ինչ հրաշալիքնե-
 րով լի օրեր էին դրանք, անկարող
 եմ նկարագրել. ես ինձ զգում եմ
 ընկճուած ու խեղճացած հիացմուն-
 քի այն անագին բնուի տակ, որ պա-
 րուենակում էին իրանց վեճութեան
 մէջ այդ հրաշալի օրերը : Մարդ-
 կային հոգին չունի այնքան ուժ
 պարփակելու իր մէջ այդ հիացմուն-
 քի հսկայութիւնը :

Ինչ օրեր էին ..

Թիֆլիսի բազմացեղ ժողովուրդը
 միաբան, մի սիրտ, մի հոգի գար-
 ձած, ազգերի եղբայրութիւնն էր
 տոնում. չեն մոռացուի երբէք այդ
 օրերը, որոնք միեւնոյն ժամանակ
 մի հսկայական ապտակ էին ուսու
 կառավարութեան լսելիք երեսին. նը-
 րանք աննշմելի այնպիսի մի խորան
 գրեցին մինչեւ ամենագարջ աղտե-
 ղութիւնները խոնարհուած այդ ճա-
 կատի վրայ, որ ամէն անարգանք
 կուլ աւող, ամէն մի խայտառակու-
 թիւն չուտ մոռացող ուսու կառավա-
 րութիւնն անգամ չի կարող մոռա-
 նալ : Ահա նրա պատասխանը : Ո՛չ,
 չեն յաջողի թո զիւային ձեռնարկու-
 թիւնները եւ չի՛ իրականանայ քո
 հրէշաւոր նպատակը : այլեւս ու՛չ է.
 կովկասի ժողովուրդն այժմ գէթ
 այն աստիճանի ինքնպիտակցու-
 թեան է հասել, որ այլեւս անկա-
 րելի է նրան երեսայի նման խաբել
 մոլորեցնել :

Ստիպուած եմ առ այժմ ընդհատել
 Բագուի ազգային անցքերի նկարագ-
 րութեան շարքը եւ գրել մի քանի
 խօսք այս երկու նշանաւոր օրերի մա-
 սին : որքան առաջինները ճշող յու-
 սահատիչ էին իրանց աւերիչ, կոր-
 ծանիչ բնաւորութեամբ, նոյնքան եւ

աւելի հոգեպարտ, յուսատու, թեւ
 ու թռիչ աւող էին երկրորդները ի
 րանց եղբայրական գեղեցկութեամբ :
 Արիւնի, ազգերի անմիտ ընդհար-
 ման մոայլ ուրուական անցաւ եւ
 մենք միգ մի փոքր թիֆլիսցեաց, ա-
 պաքինուած ենք զգում Բագուի ա-
 ղէտներից կրած վշտերից : Ամսիս
 11ին եւ 12ին Թիֆլիսում տեղի ու-
 նեցան նշանաւոր հոգեհանգիստներ
 Բագուի ազգային զոհ գնացածների
 համար : Յաջորդաբար դրանց հետե-
 ւեցին 13 (26), եւ 14 (27)ին այնպիսի
 հոգեհանգիստներ, որոնք ցման ան-
 մեռ կը մնան ամէն մի անձի յիշո-
 ղութեան մէջ, որին բաղղը վիճակեց
 տեսնել եւ զգալ, նրանց :

Ճառում եմ, որ կախեալ վի-
 ճակս, որ խլում է ինձանից համար-
 եայ ամբողջ օրը թող չի տալիս օր
 առաջ հարգուող «Շարժում» ըն-
 թերցողներին այն ամէնը, ինչ որ
 ներկայումս յուզում է կովկասի բը-
 նակցութիւնը. առ այժմ, ժամանա-
 կի պրութեան պատճառով
 կը գրեմ միայն ամսի 13ին կայացած
 հոգեհանգուստի մասին, իսկ նրա երկ-
 րորդ օրուայ տոնախմբութեան մա-
 սին երկու օր յետոյ :

Կիրակի էր այդ օրը. առաւօտից
 ի վեր ժողովրդի բազմութիւնը հոծ
 խմբերով լցնում էր վանքի մայր ե-
 կեղեցու ընդարձակ գաւթը. ժամը
 12ին այլեւս անկարելի էր ժողովրդի
 բազմութիւնը ձեղքել. որը ծովացած
 շարժում է ալիքների պէս : Հանդէ-
 սը փառայել էր եւ աւելի շուք
 փառահեղութիւն ստացաւ հէնց այդ
 օրը վեհափառ կաթողիկոսի Թիֆլիս
 ժամանելովը, որը ժողովրդի բարձ-
 րագոյ կեցցէների ուղեկցութեամբ
 անցաւ հոծ բազմութեան միջից եւ
 բարձրացաւ առաջնորդարանը. երբ
 վեհափառը կանգնելով սանդուխտ-
 ների գլխին օրհնում էր ժողովրդին,
 այդ անագին բազմութիւնը լռել էր
 մի շնչի նման : չէին լուում նոյն իսկ
 շնչառութեան ձայնը : Զարմանալի
 է երբեմն ամբողջ հոգեբանութիւնը,
 Այդ օրը այդ խուռն բազմութեան
 մէջ տրուում էր օրինակելի կարգա-
 պահութիւն. ամենափոքրիկ մի ընդ-
 հարում չէր վրդովում հասարակա-
 կան տրամադրութիւնը. այդ օրուայ
 համար պահանջուած էր կառավարու-
 թիւնից կարգ պահպանելու համար
 չուզարկել ո՛չ մի ոտախկան. այդ
 պարտականութիւնը յանձն էր առել
 Դաշնակցութիւնը, որը հիանալի
 կերպով առաջ տարաւ մտ 10 հազար
 անձից բաղկացած մի այլազան բազ-
 մութեան մէջ :

Ժամը մէկն էր, երբ եկեղեցական

Թափօրը տխուր հանդիսաւորութեամբ
 եկեղեցուց դուրս եկաւ բազմութեան
 մէջ եւ ամբողջ ժողովրդի վշտագին
 մասնակցութեամբ կատարեց հոգե-
 հանգստի արարողութիւնը : Պարզ ու
 գեղեցիկ օգում ալիքների նման ծա-
 ծանուելով բարձրանում էին վեր
 տխուր մեղեքներին հոգեբուղիս նշ-
 իւնները. մինչ նոյն արամադրու-
 թիւնն էր համակել ամբողջ ժողո-
 վուրդը այդ բազմիւն, որ այնպէս յու-
 ղիչ հանդիսաւորութեամբ, 10 հազար
 հոգով ծուռն լիջաւ, երբ երգեցիկ
 խումբը սկսեց երգել աէրուական
 աղօթքը : Անկարելի էր զսպել ար-
 տասուք, որ յորդութեամբ լցնում,
 լուսնում էր մեր սիրտը. անբիծ ու
 վսեմ էր Բագուի նահատակների յի-
 շատակին նուիրուած այդ հանդէսը :

Հոգեհանգստին ներկայ էին մահ-
 մետական Սիւնիների մոֆթիւն, Շի-
 աների շէյխութիւնը, տեղապահը՝
 ուրիշ մահմետական հոգեւորականնե-
 րի, նշանաւոր անձերի եւ բազմա-
 թիւ ժողովրդի հետ : Հոգեհանգստի
 վերջում թուրք հոգեւորականները
 հայոց առաջնորդը եւ ուրիշները ճառ
 խօսեցին, միաբերան յայտնելով այն
 միտքը, որ Բագուի ընդհարումը սա-
 տանայի գոյծ էր, որ թուրքերը եւ
 հայերը մշտական լաւ դրացիներ են
 եղել եւ պէտք է լինին այսուհետեւ :
 Ժամը երկուսին ծով բազմութիւնը
 սկսեց ցրուել : Թիֆլիսի առաջնորդը,
 ուրիշ հայ եւ թուրք հոգեւորական
 ների հետ, մի ստուար բազմութիւն
 ժողովրդի ուղեկցութեամբ դիմեցին
 դէպի Թուրքերի մէջիցը, ուր կա-
 տարեցին հոգեհանգիստ եւ հայ հո-
 գեւորականները խօսեցին ճառեր.
 Թէ՛ հայոց եւ թէ՛ թուրքաց հոգե-
 հանգիստներում խօսած ճառերը հա-
 յերէնից իմ ըբերէնի եւ թուրքերի-
 նից հայերէնի թարգմանում էր համ-
 բարձում Առաքէլեանը :

Թիֆլիսում շատ ամուր կապերով
 հաստատուեց եղբայրութիւնը եւ ամ-
 բողջ ժողովուրդը, թէ՛ թուրք թէ՛
 հայ գոհ մնացին մինչեւ երկիրք.
 այդ օրը կարծես ամէնքի սրտի վրա-
 յից մի ճնշող ծանրութիւն վար ըն-
 կաւ. փոքր ինչ հանդարտեց հասա-
 րակական տենդային տրամադրու-
 թիւնը եւ ամէնքը հանդիստ սրտով
 Բագուի ազգային վեճատաններին օգ-
 նելու գործին կայան : Դրանից գեո
 երկու օր առաջ բոլոր լրագիրները,
 շատ հիմնարկութիւններ եւ մասնա-
 ւոր անձեր բացել են հանգստակու-
 թիւն այդ նպատակի համար : Փետր-
 վարի 8ին Թիֆլիսի առաջնորդարա-
 նում կայացած ժողովում 12 հոգուց
 բաղկացած մի յանձնաժողով ընտ-

րուեց հոգուո յստակապէս ազգային
 զոհ գնացած հայ ընտանիքների վի-
 ճակը թեթեւացնելու համար եւ հե-
 տամուտ լինելի գանձու ազգային ծագ-
 ման իսկական պատճառները. այդ
 յանձնաժողովը, որին օրհնեց եւ
 հաստատեց իր կոնցրետով ծերունա-
 պարզ Հայրապետը կազմուած է հե-
 տեւեալ անձերից՝ նախագահութեամբ
 Թիֆլիսի առաջնորդ Կեր. Դարեգին
 եպիսկոպոս Սարգիսեանի : Ա. Ահա-
 րունեան, Հ. Առաքելեան, իշխ. Այ.
 Մ. Այդ. թեան, Առ. Բարեան, բժ.
 Այ. Ստեփանեան, Այ. Մելիք—Աղա-
 եան, Ս Մելիք Աղ. Մելիք—Աղա-
 հանէտեան, բժ. Կ. Ստեփանեան, Լ.
 Սարգեան, Ա. Սահակեան եւ Ալ
 Քարանդար :

Հասարակութիւնը օգնում է սաս-
 տանան, կիրակի օրուայ հոգեհան-
 գստին պըտարեցրած գանձանակնու-
 բով հասաքուել է 750 բուրջի. իսկ
 այսօր բոլոր նուիրաւորութիւնները
 մի քանի հարիւր հազարի են հա-
 նում :

Ձիք չարիք առանց բարիքի ա-
 սաց այդ օրը վեհափառ կաթողիկոսը
 Բագուի ազգային խորհրդի հետ
 միասին տուեց եւ աղքատացնելի օ-
 գուտներ, որոնց ամենալաւ առնա-
 ւառչեան հէնց փետրվար 13ի հոգե-
 հանգիստն էր. վե՛հ էր այդ օրը եւ
 աւելի եւս վե՛հ նրան հետեւող օրը,
 որի մասին կը գրեմ նետեւել ան
 գամ :

ՅԻԼԱԿԻ

Թիֆլիս, 15 փետր

Յ Ի Լ Ի Պ Է Ի


Կրասնոսոց Եղբայրութիւն
 (Հաստատուած 1883ին)

Ընթերցողարանը բաց է բոլոր
 գիշերները կիրակի և շոբի քշուր-
 թի գրչերներէ կտտ :

Կիրակի բաց է ամբողջ օրը օ
 տոներուն կէս օրէն ետքը միայն :
 Մատենադարանէն գիրք ԼԸ
 տրուի կիրակի առաւօտները :

Հայ հեղինակներէ շնորհակա-
 լութեամբ կատուցո ին նուէրներ :

Վարչութիւն



Հայոց
Պատրիարքարան
հավատ...

Պ Ա Տ Ճ Ե Ն

Կ. Պոլիս 10 դեկտ. 1904

Մեծ Աստուածատու Հ. Պատ. Թագ.
Սարգսյոյ...

Ասկէջ առաջ Ֆիլիպի Թագ. Սար
հուրը ծանուցած էր մեզի թէ Պուլ-
կարիոյ հանրային կրթութեան նա-
խարարութիւնն իշխանապետութեան
օրէնքն ալիս ճշգիւ գործադրելու
մասք. սկսած է արգիլել պաշտօնա-
վարել սպայային վարժարանաց մը
դաստիարակ այն հայ ուսուցիչներն ու
ուսուցչուհիները որք չունին ի ձեռին
Պուլկարիոյ երկրորդական վարժար-
աններէն տրուած ուսուցչական վր-
կայագրերը. համաձայն կրթական օ-
րինաց արածագրութեանց. ոչ քարգ
թողաւու ոգով կը գործադրուին ե-
ղեր. և կը յաւելուր թէ Ազգ. վար-
ժարանաց մէջ պաշտօնավարող ու-
սուցիչք մեծաւ մասով զուրկ լինե-
լով պահանջուած վկայագրերէն,
պուլկարիոյ վարժարաններն
փակման վտանգին ենթարկուած են
և նոյնիսկ արգիլել էին քանիս ալ
փակուած են. ինչպէս Ֆիլիպի Թա-
գար-Թագարճը վարժարաններն է
էյս անգեկո. թեանց վրայ թէ բանիւ
րերանց և թէ կրով կատարած էինք
հարկ եղած պիտուին Մայրաքաղաքիս
Պուլկարական գործակատարութեան
մօտ. և բացատրելով գործը խնդրած
էինք որ միջնորդէ որոց մօտ որ ան-
կէ, որպէս զի Պուլկարիոյ սպայային
վարժարանաց մէջ դաստիարակուող
ուսուցչուհիներու և ուսուցչուհի-
ներու համար բաւ համարուի Պատ-
րիարքարանի տուած վկայագրերն է
էյս անգամ մայրաքաղաքիս Պուլկար-
գործակալութիւնն գրով մը կը հա-
զորդէ մեզ այս խնդրոյն մասին Պուլ-
կարիոյ կրթական նախարարին պա-
տասխանն, որով այս դպրոցական
տարեջրմանին համար միայն բացառիկ
չնոր մը ըլլալը կը ծանուցուի:

Ներփակեալ հազարգելով մեզ նոյն
պատասխանագրոյն թարգմանութիւնն
կը յանձնարարեցք առ այժմ օգտը-
ւիլ տնոր դրամագրութեան և միւս
կողմէ իմացել մեզ անոր պարունա-
կութեան մասին ձեր կարծիքը եւ
այն հետեւանքներն որք կրնան ծա-
ղի Ազգին իր վարժարանաց վրայ

ՂԱՐԴՈՒՆ ԿԵԱՒԷՆ

(ՀՂՂԻՆ ՁԱՅ Ը)

Վերջ. հողիմ քիւն մեռնիկ...
Գ.

Կրակոտ աչքերն ուղղեց զէպի
փրփրոտ մաթ ծովը. հեռուն. հե-
ռուն ուրտիղ ան կը հասնէր: Այլը-
ներու ամեհի հառաչանքները մոլե-
գին շտուշիւնով կը լսուէին անգո-
գար չրախ, չրախ ձեռնելով միօրի-
նակ ժայռերն ու հողերը, որոնք
չգիտած էին անոնց առաջխաղացու-
թիւնը: Վառվառը այս խուլ ձայնե-
րու մեկն թուաւ այն երկիրը, այն
վայրերը, որոնցմէ տարի մը առաջ

ուներցած իրաւասութեան տեսակէ-
տով. եթէ Պուլկարիոյ իշխանապե-
տութեան կրթական օրէնքին տրա-
մադրութիւնն գործունէութեան գնել
ուզուի:

Մեծ ազօրարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐԿԵՊԻՍԿՈՍ

ՀԱՄԱՐ 1535

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն

Կ. Պոլիս 9 նոյ. 1904

Պուլկարիոյ հանրային կրթութեան
նախարարն ի պատասխանի Ձեր այն
գեկուցման գոր հազորդած էինք ի-
րեն Ձեր Արքայութեան 9/22 Հոկտ-
բերականաւ և 16293 համարաւ գր-
ութեան նկատմամբ կը ծանուցուէ
մեզ թէ զպրոցական ներկայ տարե-
ջրջմանին համար տուած է իր հաս-
նութիւնը այն բացառութեան մա-
սին որ խնդրուած էր Պուլկարիոյ
հայ վարժարանաց ուսուցիչներու եւ
ուսուցչուհիներու նկատմամբ:

Այսու հանդերձ վսեմ. նախարարն
հազարգելով ինձ սոյն շնորհն, որ
այլքան առժամանակեայ է որքան
արձանական. կը յուսայ որ պատրի-
արքարանդ պիտի ուզէ օգտուիլ ան-
կէ. և այժմն հարկ եղած միջոցնե-
րը ձեռք պիտի առնէ պատրաստուե-
լու և կատարելագործելու համար ու-
սուցչական մարմիններն օրինաց հա-
մաձայն, որոյ տրամադրութիւնն բա-
ցորոշ են. իշխանապետութեան մէջ
հանրային կրթութեան մասին և այս
կերպով պիտի ապահովէ ապագային
մէջ հայ դպրոցներու կանոնաւոր գոր-
ծունէութիւնը:

Ձայս հազորգելով Ձեր Արքայու-
թեան կը խնդրենք ընդունիլ խորին
յայգանացս հաւաստին:

Ստոր. ՆԱՁԷՎԻԶ

Տիար ԽՈՒՐԱԳԻՐ

Ներփակեալները ի նկատի ունեցէք
և այս մասին ձեր ազգօրուտ թերթի
միջոցաւ պէտք եղած հարեք ըրէք
պուլկարահայերուն, սթափեցուցէք զի-
րենք իրենց խոր թմրութեան. ո՞ր
են մեր թողական խորհուրդները,
հողաբարձուները երիտասարդները և
խմբագիրները ի՞նչու անտարբեր կը

բաժնուեցաւ աղ ու արցունքով Ահա
հեռուէն երեւցան Հազարպապայի
մաթ ու մարտիկը ծածկուած կա-
տարները. հոս է Ս... գիւղը իրկա-
նանչ արտերով, չրոսներով ծառ ու
ձառաստաններով, հոս այգիներուն
մէջ Ս. Յովհաննէսի, հոս ըլրի թե-
ւին Ս. Նշանի փլատակ մատուները,
իրենց խաչ-քարէ յիշատակներով զի-
ղը կը պահպանեն, անոնց ոտքը շատ
անգամ ուխտի էր գնացեր, մոմ վա-
ռեր և խորին ջերմեանդութեամբ
համբուրեր միտա քարերը, որոնց վը-
րայ անհամար համբոյրներ է գրօշ-
մուած հին-հին դարեր առաջ: Ահա
գիւղին գերեզմանոցը խոշոր թիթե-
նիին շորցած ճիւղերուն տակ կը քը-
նանան մեռելները, հոն է վառվառի
ձոր ու պապական գերեզմանը մամու-
տած. անտաշ քարերով, Գեղն է իր

գտնուին, ո՞ւր են մեր Տէր պապա-
ները միայն ժամուցենք հաւաքելու
ցանկութիւն ունենալու է, այս քա-
հանայական պարտականութիւնը չէ՞,
5-6 ամբսէ ետք երբ վարժարանները
չի վերաբացուին ի՞նչ կարծէ Տէր ու-
ղորմեայ երգել եկեղեցին, վերջինը
կարեւորութիւն կունենայ՝ առանց
վարժարանի. վարժարանն աւելի նը-
ւերական է վսեմ և անգին: Արգ-
արթնանք, ձեռք ձեռքի տանք ժո-
ղովներ գումարները, գիւմենք կաթո-
ղիկութիւն, Պատրիարքին որ մեր վար-
ժարաններու վերաբացման համար
պէտք եղածներն ի գործ դնեն:

Տէր խմբագիր, դուք առաջնու-
թիւն ունեցէք թիրթիր առաջին թի-
ւին միջոցաւ հարկ եղած կոչումն ը-
նելով պուլկարահայութեան, մի նա-
սիք Ձեր պաշտօնակցին ՇէճԻԻին որ
մինակ թերթի ծախելու, ապրելու
հանրութեան բարոյականն աւելու-
իր մարմինը պարտաւորուելու համար
հրապարակ իջած է:
Կրպակները ձեռնէ:

ԱՀՈՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՆ

Ամսոյս 25ին քաղաքիս սուրբ Աս-
տուածածնայ եկեղեցւոյ մէջ հոգե-
հանգստեան պաշտօն կատարուեցաւ
ըստ սովորականի, և եկեղեցւոյ ա-
ւարտուէն վերջը ժողովրդեան կո-
կիկ բազմութեան ներկայութեամբ,
Վարդանան Արական վարժարանի
սրահին մէջ, ատենախօսութիւն սե-
ղի ունեցաւ քանի մը երգերէն եւ
մի քանի ոգեւորիչ ոտանաւորներ ար-
տասունուէն վերջը. բեմ ելաւ տա-
ճատ Պէլլէրեան, իր պատուելիական
կեղծ ձեռնով, ուզեց քրիստոնէու-
թիւն քարոզել ժողովրդին աւե-
տարանէն քանի մը բան անելով.
Ետոյ պաշտելի Վարդան Մամիկոն-
եանի կենսագրութիւնը ուզեց պար-
զել. բայց զժբախտաբար ինքն իսկ
չը գիտէր ինչ խոսիլու եւ ինչ նիւթ
առնելով բեմ ելլալը. գիւղէ գիւղ
պատելէն վերջը իր սովորական թոյ-
նը դարձեալ սկսաւ թափել հայ յե-
ղափոխութեան գործող տարրին վրայ
ու ելեր է պատուելիական գծուծ քա-
րօզներ կարդալու ժողովրդին. Վար-
դանի պէս հերոս մը առիթ ունենա-
լով, առարկելով թէ ներկայ պարա-
գայի յեղափոխական կուսակցութիւն-
ները ոչ մէկ ուղղութեամբ կը գոր-

ծեն եղեր Բա՛յց պ. ատենախօս
պէտք է գիտնաք որ դուք չէք կարող
քննադատել հայ յեղափոխութիւնը.
ինչու որ քեզէ շատ բարձր մարդիկ-
ներ ծրարած են նոյն տակտիկա-
ները, նոյն իսկ հայ բանաստեղծները
ցուցուցած են նոյն ճամբան. և ներ-
կայ Հայ յեղափոխութիւնը այն գրծ-
ուած ծրարող է որ կը գործէ, դուք
առաջին անգամ ինքզինքնիդ
քարոզեցէք. և վերջը ելէք ժողովրդին
քարոզելու թէ՛ այսպէս ու այնպէս
պէտք է յեղափոխութիւնը ժողովուր-
դը շան քարոզներու պէտք չունի
հարկ չկայ երկար բարակ գրելու ձեռ-
անցեալին վրայ. ինչու որ պուլկարա-
հայերը կը ճանչնան ձեզի Արիւստրե-
յէն վառնայէն մանաւանդ Սօֆիայէն
և ձեր անկէ մեկնելէ զվերջն ալ
գրած էին Շարժում ազգօրուտ թեր-
թին մէջ. ինչ նկարագրի աէր մարդ
ըլլալիդ և ճիշդ նոյն անականը որ
քեզ առեւծ էին շատ յարմար էր. ու
յետոյ երկու խօսքի մէջ միայն ես
գրեմք ձեր մէջ ես գրեմք մեզ գիտեմ.
մի կարծէր որ քեզէ զատ գիտցող
չիկայ. ընդ հակառակը մեր ազգի մէջ
կան մարդիկ որոնց քով դուք բնաւ
բան չէք գիտեր բացի եստուրութեանէ.
մանաւանդ ձեր առարկած յեղափո-
խականներու մէջ աւելի, քեզէ շատ
գիտցող մարդիկներ կան, որոնք կա-
րող են քեզէ շատ լաւ մտածել ամեն
ինչ. կրնէք թէ ես յեղափոխութիւն
ըրած եմ բուն երկրի մէջ, խօսքովդ
ապա թէ ոչ ակնոցներովդ ինչպէս որ
Դուրեանը ըսած է, չէ չը լինիր ոչ
ակնոցով ոչ մորուքով գիտուն ըսուի
չը լինիր
Նորպէս գիտունները իսկ գո-
ւեցին Հայ յեղափոխութեան գործող
տարրին տակտիկան ո՞ւր մնաց որ
դուք կը նախատէք, վա՛յ ձեզ, որ
ազգը ձեզ պէս շատ գիտցողներ ունի.
Յետոյ բեմ ելաւ Արտաշէս կարա-
պետեանը ոգեւորուած կերպով պատ-
մեց Հայ ազգի Փաստաւոր անցեալը
և Վարդան Մամիկոնեանի ըրած
հայրենասիրութիւններն ու քաջու-
թիւնները, ինչու որ առաջին ասե-
նախօսը չկարողացաւ իր ստանձնած
նիւթը պէտք եղած կերպով պարզել,
բացի պատուէն ուրիշ բան չկար մէջ-
տեղը. եւ ստիպուած Արտաշէս կա-
րպետեանը երկար բարակ պարզեց
Վարդանի կենսագրութիւնը որ յեղա-
փոխութեան մէջ շատ օգտակար կա-
րող է ըլլալու եւ չիւտեց. թէ
այնպէս պէտք է ըլլանք, ինչ որ կը
պահանջէ ճշմարիտութեան կարծէր այս
պ. ատենախօսին մտիկ ընել:

ՀԱՆԴԻՍՏԵՍ

Շուրա 25 փետրուար

պատմելով ամառը սաստիկ շոգին,
մանգաղը թեւին կտրիճի պէս արտին
զլուխը կանգնած մանգաղ էր շարժեր,
ամենուրեւ հետ յապիթութիւն տանելով:
Այս անմոռանալի օրերը վառվառի
վիրաւոր սիրտը արկնեցին, ան
սկսաւ գտնել կերպով հեկեկալ ու իջ-
սի:
Օղջիւ մը ունէի մարկի, ճրագ չկայ...
Մեր արտերը վարող ցանող ձկայ...
Ան արտասանեց այս խօսքերը այն-
պիսի արտասովոր շեշտով որ սկիւնակի
ցած առիթն անգամ արձագանգ տուեց
վշտահար կնկան. Յետոյ թողեց պա-
տուհանը անցաւ պատկեց, սեղեկեց,
բացաւ խոշոր սափանք, ճարտուած
քուրջ մը պիտի սեղեկուած ավելի
վերադարձաւ. Ափ մը սեւ սրագը
հող էր քրքրի մէջ փաթեթաւոր վառ-
վառք թրեց արտին հողէ էր ճարտ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Թուրքա, 21 փետր.

Առաջին անգամն է որ գրիչը ձեռք կառնեմ ազգային լրագրոյ մը մէջ թղթակցութիւն մը գրելու սակայն աւագ որ գրելիքս մահագոյժ մըն է որ տեղւոյս հայ համայնքին մեծ ցաւ պատճառեց.

Կան մարդիկ որոնց կեանքն ու մահը կը մնան անձանօթ որպէս թէ աշխարհին մէջ գոյութիւն ունեցած չըլլաին, կան մարդիկ ալ որոնց մահը իրեննե, բը միայն կողքան, այդպիսինքն չէր հանգուցեալ մահ. Անդրեաս Թէրզեանը, սա իբր յեղափոխական և հայրենասէր կրցած էր ընկերական շրջանի մէջ ամենքիս համակրութիւնը գրաւել. միշտ առատաձեռն իր կենդանութեանը յօգուտ ազգային յառաջդիմութեան բարի օրինակ ըլլալով տեղւոյս անտարբերներուն մեծնեղէն շարժմը առաջ ալ տասնական բարով շահած 500 ֆր. գումարին 200ը Դաշնակցութեան արամագրութեան ներքեւ գրուելը կտակած և մնացած 300ն ալ տեղւոյս եկեղեցւոյն նուիրած է.

Ասով իր անունը անմահացնելով հանդերձ, սքանչելի օրինակ մը եղած է արտասահմանի անտարբեր հայերուն, որոնք իրենց գիշած ոսկիէ բլուրներէն շին ուզեր մաս հանել, յօգուտ յեղափոխութեան որ ազգին փրկութեանը համար ամեն տեսակ զոհողութիւններ ընելով ամբողջ հայութեան ճակատագիրը վճռելու ամենաձանձու պատասխանատուութիւնը իր ուսերուն վրայ առած է.

Սրբազան պարտականութիւն համարեցի ինձ հրապարակաւ ծանուցանել ձայն ազնիւ հայրենակցին կորուստն որ ամենուս համար սուրբ եղող գաղափարէն սոցորեալ իր կարողութեան համեստ չափով կատարեց իր պարտականութիւնը, թող իր յիշատակն

օրհնեալ լինի և օրինակին հետեւողներու թիւը սաստաբանայ.

Տեղւոյս Ռուսէն լրագրիներն ալ սիւնակներ նուիրած են հանգուցելոյն որ իր կազմուածքին թերութիւններով հանդերձ բոլոր քաղաքացւոց համակրութիւնը գրաւած էր.

ԱՆՍՆԻՏ

Սիւրստի 26 փետրուար

Ամսոյս 24 ին տեղւոյս Սբ. Աստուածածին եկեղեցւոյ մասնաճեղատ ամենէն վարդանի յիշատակը ու յետ աւարտման Սբ. Պատարարի կատարուեցաւ հոգեհանգիստ Բագուի զոհերի համար. Երկան բոլոր հայ խանութները փակ էին և ամէն մարդ փութացեր էր ներկայ գտնուել օրուան հանդէսին ու Բագուի զոհերի համար կատարուելիք հոգեհանգիստեան պաշտօնին.

Եկեղեցական արարողութեանէ ետք գարոց. առաջնորդութեամբ ել գերով. Տէր Սարգիս հայրը տարուեցաւ վերժարանի սրահը որ լի էր բազմութեամբ որով շատեր ստիպուած էին ոտքի վրայ կենալ, Սրահը զարդարուած էր գոյնզգոյն կապերտներով, մէջտեղը գրուած կար քաջն վարդանայ ու նախահայր Հայկայ պատկերները պատկերով և գրօշակներով զարդարուած.

Հանդէսը սկսաւ «Տէր կեցոյով ու ապա վարժարանի սանիրը երգեցին ու ճառեցին փոքրիկ ոտանաւորներ շատ յաջող կերպով. այս մասին գովելի է պատուարժան ուղեցրած ջանքերը. նշանակելի էր նաեւ վարդանայ տրամախօսութիւնը, փոքրիկ պատկեր մը պատերազմի օրերէն, որու գերակատար Պարոնայք շատ յաջող դուրս եկան, նամանաւանդ Օր. Զ. Լալէնանց հիացուց հանդիսականները.

Ամենէն վերջ բեմելու Արժ. Տէր Սարգիս հայր Աստիպեանը, որ համառօտ կերպով օրուան վեհութեան վրայ մի տեսութիւն

ընելէ վերջ մատնուեալ օր և պահ. պանիչով մը մահացնուցէնք.

Իսրայէլ յոյն երեկոյնի վարժարանի սրահում տեղի ունեցաւ Ազգ. պարահանդէս մը կարգադրութեամբ պատուարժան հարգաբարձուաց. առաջին անգամն էր որ կը տեսնուէր տեղւոյս հողարարձութեան եռանդագին ու համբաւալի գործունէութիւնը, որ թէ՛ հանդէսի և թէ՛ պարահանդէսի փայլունութեան համար ջանք չէր խնայած, որով թէ վարժարանը նպատուեցաւ և թէ Սիւրստիէն սկսած հայութիւնը շատ ընտիր ժամանց մը ունեցաւ այդ երեկոյնի վերջապէս այս տարուան հանդէսն ու պարահանդէսը գերազանցելի նախորդները.

Ս է Զ Ա Ն

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՌԻՍԱՆ. ՄԻՈՒԹԻՒՆ

(Շրջաբերական նամակ)

Ը ն կ ե բ ն ե բ

Ներկայ տարւոյ համագումարը կը կայանայ ապրիլի 1ին, Եվէյցարիայի Բէրն քաղաքում.

Այդ ստիճով խնդրում ենք բոլոր ուսանողական մարմիններին.

- 1) Հրաւիրել ժողով և ընտրել պատգամաւորներ (Կանոն. յօդ 10)
 - 2) Որոշել այն հարցերը, որ ցանկանում են ենթարկել Համագումարի քննութեան.
 - 3) Ուղարկել մեզ՝ Համագումարին դասախօսել ցանկացող ընկերների անունները, ինչպէս և դասախօսութեան վերնագիրը (յօդ. 18).
 - 4) Աւարկել վիճակագրական տեղեկութիւններ, «Տեղեկագրի» մէջ մտցնելու համար.
- Այդ բոլորը պէտք է հասցնել ոչ ոչ քան մարտի 20ը, որպէս զի կարող լինենք «Օրակարգը» պատրաստել.

րած երբ վերջին անգամ համարուեց ու քաջանուեցաւ. Այժմ բացած անիւն մէջ սեղանից տաքուկ չըթուներուն «ախ հողին ջրին մեռնէի...» կանչելով Հայունին իր տաքուկ արցունքներով կրկին թրջեց մայր հողն, ջերմ սրտով համբուրեց և անոր հետ մահուան կրկին ուխտը կնքեց...

Ո՛հ պայտահետեւ ի՛նչ օրեր անցուց, հիւանդութիւնն աւելի և աւելի ընկճեց զայն, անկողին ինկաւ և ալ վեր չելաւ: Հայրենիքի կարօտը ամեն բանէ աւելի նուիրական և պաշտելի դարձաւ անոր, ալ կզգար որ իր հոգիը հոս պիտի փոքրիկ, այրեցական մօր սիրտը աւելի և աւելի կը ճմուէր տեսնելով զիստէն վերեւ վահանիկն ու վարդանը որոնք անթեւ ձագերու պէս կը ճաշին կը մորմքային և թեւերէն պինդ բռնած խել կուզէին

մահուան մողզէն իրենց քաղցր ու անուշիկ մայրիկը, Այժմ՝ վառվառ կը խորհէր զաւակներուն վրայ, զանոնք ի՛նչ նեղութիւններով ծոցը պահած մեծուցած էր, որոնցմէ պիտի բաժնուէր, ի՛նչ պիտի ըլլային, ո՞ր խորթ մօր ձեռքի տակ պիտի մընային, ո՞վ պիտի զուրգուարայ անոնց վրայ, երբ ալ չկար մայրը, չկար սրտայրեց «Լաւէն» որուն այսպէս կը կանչէին մանկիկները.

Թոյս աղբարն ալ գործը ձգեց, ընտանիքի առողջութեան ետեւն ինկաւ, քարտիրա մարդը այժմ միայն կը զգար իր յանցանքը, ընտանիքի մը կորուստը որուն պատճառն ինքն էր, սեւ մեղաւորի պէս գրուելը կար կը հնազանդէր կնոջ բոլոր խօսքերուն թորոս աղբար կը զգար ընտանիքի քաղցրութիւնն ու բոլոր վստիմութիւնը, և օրհասական կնոջ գըլ-

խուն վերեւ նստած, ձեռքերը ծոցին երեսայի պէս կը հեկեկար և իր յանցապարտութիւնը կը քաշէր.

Վառվառը «Հայրենիքի» ցաւ էր անոր, այնպէս բարձր թիկնէր, երթալով աւելի վառվառացաւ վիճակը, օրերը ամիսներ եղան շաբաթները տարիներ խեղճին համար: Եւ ինչպէս ան շատ անգամ կրկնած էր «մօրդ զաւակներդ առ երկիր դառնանք», մանաւորելով վերջին անգամ գարձեալ կրկնեց իր խօսքը վերջին կտակը. «մարդ զաւակներդ առ երկիր դարձիր...»

Այն ի՛նչ մտէր ու չար գիշեր էր երբ անկողնի մէջէն չար մեռելական պատկերը յանկարծ ճշագ, ահուաները կճացուց, չուրջը նայեց պատկերները քովը չէին որ վերջին անգամ գէթ երեսնին նայէր ու համբուրէր: Ակսաւ ձեռքերովը չուրջը փնտռել,

Պարտք ենք համարում աւելացնել, որ Համագումար բանալու համար՝ անհրաժեշտ է ուսանողական մարմինների գոնէ պարզ մեծամասնութեան մասնակցութիւնը.

ԼԻԱԶՕՐ ԿՕՄԻՏԷ

Ա Զ Դ

ՅՕԹՕՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՒ ՆԿԱՐԱԿԱՆՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ Չար Պօրիս փողոցի վրայ նոր բացուած լուսանկարչատան մէջ կրկնուելով յանդարտութիւններ լուսանկարների, պարզ և բնական գոյներով, նոյնպէս մեծագիր դիմանկարների. ի. Գանկի և Բրեօն (պարսխալէս):

Կընդունիմ նաեւ նկարչութեան վերաբերեալ ամէն յանձնարարութիւնը.

Պատ. յաճախորդներս ամէն կերպով գոհացնելու համար ջանք չպիտի խնայուի:

Ա. Զարհիկեան

Նոր ստացուած հրատարակութիւններ

Ս. Թ. Քնէնս. — «Անգրոսիկէ» վէպ յունական յեղափոխական կնանքէ. հրատարակութիւն «Հայրենիք»:

Է. Ա. Կնունի. — «Դէպի կոնի» հայկական վրագործեան միջոց, Հրատարակութիւն Հայ Յեղ. Դաշնակցութեան, Ժրնէյվ Կիւն 1, 2 ֆր.

Պատի օրացոյց քարթ. — Սասունի հերոսներ Հրայր. Վահան, Թորգոմ և Վաղարշակի պատկերներով. հրատարակութիւն «Հայրենիք»ի. Պոսթօն, Կիւն 10 սէնթ. զիմել Հայրենիքի խմբագրութեան.

ՅԱԿՈՒ Կ. Զ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Սարսափ) ՎԱՌՆԷՆ

Չանազան ընկերութեանց արժեթղթեր կը գնէ:

10-12

վերջապէս գտաւ. բարձի տակէն, զորս քաշեց քրջով հողը սեղանի կուրծքին. անոր բարբ զէմքով հրէշտակային ժպիտ մը անցաւ և խաղաղ տքովը ցածքեցաւ հողին վրայ:

Բ... ճամբուն վրայ է զարկանբուն զերթամանոցը, այնտեղ կանանց մարգագետնի վրայ թարմ գերեզման մը կայ. Պանդոխոն հայ մը շաք առնալով իր երկու զուկներուն ձեռքին բռնած կուզայ հոն իր մեռածին տեսութեան. Թորոս աղբարն է որ կը նստի գերեզմանի գլխին, աչքերը կը թրջուին, Երբ ի մարդը կուրայ, Երբ մանկիկներու հետ կը ծոխ հողի համբուրու և աչքերը ետին ձգած կը հեռանայ, գետնի տակէն մեզմ ձայն մը կը փոփոխայ մարդ զաւակներդ առ երկիր գարձիր...»

ՈՒՆՏՍՒՈՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւարտական Երեւելեան ընկերութիւնը տրամադրութիւն ունի Սօֆիայի մէջ աւարտական ցուցահանդէս մը կազմակերպել:

— Իշխանի Լոնտոն ճամբորդելը և փառաւոր ընդունելութիւն գտնելը Սուլթանին ահա հանգստութիւն կը պատճառէ:

— Ռուս մամուլն ալ զժպոհ է ըլլաւանին եւրոպական մեծ պետութեանց շարք մը այցելութիւններուն համար:

— Մախո Չէն սկսեալ բարձրացած է սպիրտի և գինիի ազդելը ինչպէս նաև սպանի և գոնսիքներու:

Կազի մարտային տուրքը 1էն 5 լէվի բարձրացած է: Մէկ տուղինա խաղաթուղթերուն համար 12 լէվ կանուրի:

— Ատրիանոպոլսի նահանգէն երեք պահներ Պուլկարիա փոխած են իրենց հայրենիքը՝ կը բէտէ վերադարձնելու համար, որով սոճիկ չեն ստանար եղբօ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Վրէննայէն Մարտ 2ին կը հեռագրեն որ Սուլթանը Մակեդոնիոյ իշխանութեանց գաղտնի կերպով հրամայած է որ հրոսակները ձերբակալելուն պէս սպանեն, որովհետեւ ոչ միայն պարագային կրկին ներս պիտի պահանջուի:

— Պալատի երկու կարեւոր պաշտօնեաներ Սուլթանէն կարեւոր տօքի մաններ գողնալով Եւրոպա փախեր են:

— Թուրք կառավարութիւնը թերթերուն արգիլած է վէպեր հրատարակել, մանաւանդ եւրոպական:

— Կառավարութիւնը Պանք Օթոմանէն կը պահանջէ որ Մակեդոնիոյ ելեւտական բարենորոգումները իրագործէ:

— Եւմէն զօրք պիկելը ուշացեր է որովհետեւ պատերազմական նախարար չէ կրցեր նաեւ վարձելու համար պէտք եղած դրանք ճախել:

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ Օթէլ Բրիտանիոյն ուր ուսմը պայթեցաւ տէրը մալորոսս մըն է որուն քով արկղով յեղափոխական տօքի մաններ գտնուած են:

— Քուրօբաթքին գլխաւոր հրամանատարութեան հրամարտութեանց է, Յարր հեռագրած է որ անժամպէս հրամանատարութիւնը զօրավար Լինէվիչի յանձնէ:

— Ռուս քանի մը թերթեր կը պահանջեն որ պատերազմին զեկը յանձնուի Տրակովրոֆի:

— Ռեթերսպուրկայի վէտօճօթիկ թերթը կը յայտարարէ որ կառավարութիւնը պատերազմը շարունակելու համար նախապէս ժողովրդային խաւերուն պահանջներուն համաձայն պիտի ընթանայ:

— ՊՏԵՂԸ Քրօնիքի թերթի բեթերսպուրկի թղթակիցը կը հազարգէ որ նոր ներքին գործոց նախարար Պուլիքին իրեն յայտնած է թէ ինք յետագիւտական չէ, ու պաշտօն ընդունած է գլխաւորաբար ցարին գիկ: 12ին հաշակած բարենորոգումները իրագործելու համար:

ԱՆԳԼԻԱ

Անգլիական կառավարութիւնը «Նոյս Կոմօնտէր» նախն համար զօր ուս նաւատորմը անցեալ ձմեռ ընկղմեց ճարտական ծովին մէջ 100000 անգլիական ոսկի կը պահանջէ:

ՃԱՐՈՆԻԱ

Միքատօն մարէշալ Ոյաման շնորհաւորի է վերջին յաղթութեան համար: Զարոնցի հրամանատարը համեստօրէն պատասխանած է որ այդ յաղթութիւնը կը պարտի զօրավարներուն և սպաներուն:

— Լոնտօնի դեսպան Խայիչի յայտարարած է որ հաշտութիւն կրնայ սեղի ունենալ եթէ Ռուսիան առաջինը ցանկայ, ճարտական պայմանները հաշտութեան համար գեռ ձեւակերպուած չեն և ոչ մէկ կառավարութեան յայտնած են:

— ՊՈՒՆՆԱԿԻ թերթի թղթակից նոս ուս զինուորներու հետ գերի ինկած է Մուքտէնի քով ճարտարներու ձեռքը պիտի տարուի Քօրէա և անկէ ազատ արձակուի:

— 40000 ուս գերիներ ձարոնիա պիտի զրկուին:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Վրէննայի թերթերը Մարտ 2ին կը հազարգեն որ ուս զինուորները մեծ քանակութեամբ անձնատուր կըլլան:

— Բեթերսպուրկէն մարտ 2ին կը հազարգեն որ Թէլիէն եկած տեղեկութիւններու համաձայն ուս զօրքերուն մէջ կարգը վերահաստատուած է. կորուստներու թիւը վերջնապէս ճշգրտած չէ թէ: Բայց կը կարծուի որ ամբողջ զօրքին մէկ երրորդ մասը գերի ինկած և սպանուած է: — Թօքիոյէն ՊՏԵՂԸ Թէլիէն:

Թերթին կը հեռագրեն որ Մուքտէնի քով անձնատուր ենած զօրքերուն մէջ կը գտնուի նաեւ ամբողջ 16րդ զօրաբաժինը:

— Մարտ 2ին Բեթերսպուրկէն Բարիկ Կհեռագրեն թէ ուսներու Մուքտէնէն հեռանալը այնքան յանկարծակի և հապճէպով եղած է, որ բոլոր մթերանոցները ամբողջովին առանց պարպիլու թողած են թշնամուն ձեռքը:

— Բեթերսպուրկէն Գերմանական թերթի մը կը հազարգեն որ բոս պաշտօնական տեղեկութեանց Քուրօբաթքին իր զօրաբանակին մէկ երրորդ մասը կորսնցուցած է:

Նոյն թերթը կաւելցնէ որ ճարտարները ամեն ճիգ կը թափեն ուսներու Խարպին նահանջելու ճամբան կտրեն:

— Երէկուան հեռագրիւնները կը հազարգեն որ Թէլիէն արգէն առնուած է ճարտարներու կողմէն:

— Չինաստանի արտաքին գործոց նախարարը Բէքիւնի ճարտական զեսպանին շնորհակալութիւն յայտնած է ան հոգածութեան համար, զոր Մարէշալ Օյաման ունեցած է հանդէպ Մուքտէնի իր զօրքերուն հրամայելով Մուքտէնը յարգել:

— Բեթերսպուրկէն մարտ 2ին կը հազարգեն որ Կաուպուս և Պիլէտէլիի մէկէն արշները ողջ են:

— Պաշտօնական շրջանակներու մէջ թէեւ կը խոստովանին որ Քուրօբաթքին ձանր կորուստներ ունեցած է բայց 200000 ի չի հասնիր:

— Բթի ժուռնալի Բեթերսպուրկէն կը հազարգեն որ հակառակ ուս կառավարութեան հերքումներուն ցարին մօտիկ մարգիկ կարելի կը կարծեն մօտեւ հաշտութեան բանակցութեանց սկսուելուն:

— Բեթերսպուրկէն «Թայմզ» կը հազարգեն որ ճարտարք արգէն Թէլիէնի քովերը կը գտնուին:

—o—

Չայնէր հաշտութեան մասին

Անգլիական և իտալական թերթերը սկսած են խօսիլ հաշտութեան մասին և կառավարութիւններուն կառավարիկներ որ միջամրան:

«Տրիբունա» դեղին վտանգը մատնանշելով կառավարիկէ միջամտել, իսկ «Տէլի Թէլիկրաֆ» կրմանայ թէ Բարիլի և Լոնտօնի դահլիճները արգէն բանակցութեան սկսած են ցարին կառավարութեան հետ և արգիւնքի մասին պիտի հազարգեն ձարոնի կառավարութեան:

ՐԱՆՏԱՆԻ ԵՒ ՐԱՍԻԱՆ ՈՐՈՒՊՈՒԹԻՒՆ

Ե. Ֆրանգլանի «Ա Տ Ր Պ Ա Տ Ա Կ Ա Ն» Պատկերազարդ ծովածուի

«Ատրպատական» պարունակում է իր մէջ մի շարք յօդածներ (թւոյ 30 35) որոնք զանազան ժամանակներու մէջ տեսել պարտեալան հրատարակութիւններին մէջ, մեծագոյն մասը ՄՈՒՐՃ ամսագրում, կը լինեն նաև նոր գրուիւններ, իսկ արտատպումները լոյս աննելու են նոր սրբագրութեամբ աւելի ընդարձակած և ճոխացրած, Գիրքը՝ որ սպազբուելու է Թիֆլիզում, ունենալու է 450—500 էջ, 50—60 արկեր և տեսարաններ:

Բաժանորդագիրն է Ռուսաստանում 1 ռ. 50 կոպէկ: Պարսկաստանում 1 թուման, իսկ Արտասահմանում 5 ֆրանք: Բաժնեկիր կանխիկ է. լոյս տեսելուց յետոյ գրքի գինը կարող է զգալի կերպով բարձրանալ: Բաժանորդագրութիւնը ընդունում է:

Ռուսաստանում.— Թիֆլիսում՝ Վէրման պարանում. Բագում Պ Տրգրան Ռաշաճեանի մօտ. Երևանում՝ Սարգիս Օհանջանեանի մօտ. Բոստով գօնի վրայ Պ. Չաքար Ռուսաստանի մօտ Բաթումում Սողոմոն Յարութիւնեանի մօտ:

Պարսկաստանում.— Թէհրանում Պր. Յաբէթ Ռաշաթեանի մօտ. Թաբրիզում Պ. Պ Ալէք Բարաբանի և Յովսէփ Յովհաննէսեանի մօտ. Սալմաստ շեղիակը մօտ:

Արտասահմանում.— Եգիպտոս.— Դոկտոր Կ. Փաշեան.— Ալէքսանդրիա. Ամերիկա.— Հայրենիքի խմբագրատուն (Պոսթմ) Պուլկարիա.— «Շարժում» խմբագրատունը.— Կանա

Ռուսնեզ ծխավաճառ Բամաճեանի քով կը ծախուին Եւրոպ. Հայ Ռուսանդական Միութեան հրատարակած Հայաստանի Քարտէզներ. Օտար քաղաքներէն ստանալու համար 1.20 սանգիմ պէտք է զրկել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պօսթոն հրատարակուող «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթը դիւրութեամբ ստանալ ուզող Պուլկարիոյ եւ Ռուսաստանի Հնչակեան մեր մասնաճիւղերը և ընկերները իրենց որ ոչ հասցէներով պէտք է գիմն հետեւեալ հասցէին:

Г. Танчо Пеняовъ ул. Опълченска № 1
за Х. Х. Х. Пловдивъ

Տօքիոյ թորոսեան կընդունի ամէն տեսակ հիւանդներ, կէսօրէն վերջը ժամը 2էն մինչև 4 Բնակարանն է Փողոց Տուճաւաթա թիւ 3

ՕՏԳՈՐԻՆԵՅ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна